ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЩИНА СЕЛА ХОРОНК
АРМАВИРСКОЙ ОБЛАСТИ

ՀՀ Արմավիրի մարզ, գ. Խորոնք
Հեռ /10374- 099/03-08-08/0231/6-86-89/

С. Хоронк Армавирской обл. РА
Тел. /10374- 099/03-08-08/0231/6-86-89/

N 42

03 06 2013г

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի՝ 2013 թվականի մայիս ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունը:

Առդիր՝ 6 էջ:

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ս.Նահապետյան /

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 5164-13
«06» 06 2013 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-12

Գ.ԽՈՐՈՆՔ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 2, Հեռ /0231/ 6-86-89

*13 մայիսի 2013 թ.*

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.2013 թվականի հունիսի 28-ին ժամը $12^{00}$ –ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի գյուղապետարանի շենքում անցկացնել Խորոնք գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայողներ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի /ծածկագիր 1.2-1/ և առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-1/ ատեստավորումները::

2.Ատեստավորման հանձնաժողովի նիստերի տեխնիկական աշխատանքների սպասարկումն իրականացնելու համար համայնքի ղեկավարի լիազորված անձ նշանակել Գրիշա Իշխանի Ասատրյանին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / Ս.Նահապետյան/

*13 մայիսի 201. թ*

*գ. Խորոնք*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-13

Գ ԽՈՐՈՆՔ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 2, Հեռ. /0231/ 6-86-89

*15 մայիսի 2013 թ.*

## ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 31-ի թիվ 7 նիստի թիվ 1 որոշումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի բնակչուհի Սուսաննա Գառնիկի Մելքոնյանին պատկանող բնակելի տունը՝ կոդ 040-050-052-003, հասցեավորել Կոմիտասի 6:

2.Սույն որոշումը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային սպասարկման գրասենյակ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / Ս.Նահապետյան/

*15 մայիսի 2013 թ.*

*գ. Խորոնք*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ**
**ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-14**

---

Գ.ԽՈՐՈՆՔ ՄԱՅԱԹ-ՆՈՎԱ 2, Հեռ. /0231/ 6-86-89

*15 մայիսի 2013 թ.*

ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 31-ի թիվ 7 նիստի թիվ 1 որոշումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի բնակչուհի Մեղա Սամսոնի Մելքոնյանին պատկանող բնակելի տունը՝ կոդ 040-050-036-011, հասցեավորել Մայաթ-Նովայի 8:

2.Սույն որոշումը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային սպասարկման գրասենյակ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / Ս.Նահապետյան/

*15 մայիսի 2013 թ.*

*գ. Խորոնք*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-15

Գ.ԽՈՐՈՆՔ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 2, Հեռ. /0231/ 6-86-89

*16 մայիսի 2013 թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N1 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզպետի 2013 թվականի ապրիլի 3-ի թիվ 01/07.1/1187-13 գրությունը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 16-ի «Համայնքային ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելու մասին» N1 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.
1) որոշմամբ հաստատված N1 հավելվածում «Գիտելիքներ և հմտություններ» բաժնի 1-ին մասի ա) կետը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

Ունի բարձրագույն կրթություն,համայնքային ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխանող՝ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա հանրային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող՝պետական ծառայության դասային աստիճան (կոչում) կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա

պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / Ս.Նահապետյան/

*16 մայիսի 2013 թ.*

*գ. Խորոնք*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Գ. ԽՈՐՈՆՔ ՍԱՅԱԹ ՆՈՎԱ 2, Հեռ. /0231/ 6-86-89

ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք
գյուղական համայնքի ղեկավարի

*6 մայիսի 2013 թ.*

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 6

## ԳՐԻՇԱ ԻՇԽԱՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 166-րդ,169-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Գրիշա Իշխանի Ասատրյանի համաձայնությունը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ Գրիշա Իշխանի Ասատրյանին ետ կանչել ամենամյա արձակուրդից 2013 թվականի մայիսի 6-ից՝ հետագայում այն օգտագործելու նպատակով:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / ՍԱՐԳԻՍ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ/

*6 մայիսի 2013 թ.*

գ. Խորոնք